



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 15

ՅԵՇԱԲԱԹ

9 ԱՊՐԻԼ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳՈՒՍՈՒՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆԻ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՅԱՆ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱՅԱՌԱՅՈՐՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՅԱՆ անունը կեղծող կարգ մը նորելուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը երջին :

ՍԱՐԳԻՍՅԱՆ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹԸ՝ քե՛
Կ. Պալիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիկի 1900 Արուեստահամագեսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :

Հասր 40 փարսա

ԱՐՏՈՆԱՏԵՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(صازيان) مطبعة سى — باب على جاده سى ٣٨

ՀԱՄԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԸԵԱՆ

Կ. Պոլիս Պապը-Ալի հաստիսի քիւ 38



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ դէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց ևւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհի գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Ե Ր

ՀԱՅՔԱՅՔՈՒՄ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն անհետման կը գտնուին

մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱԼԱՏԱՆ

- | | |
|---------|--|
| ՌԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պճն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊԱԼԱՏԱ | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազլի, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՐՏԱՐ | Չարլը Պոյու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիղեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւղօղլուի տունը:

ՖԵՆԻՔՍ ՕՔՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍ.Լ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1960 ԻՆ Ի ՎԻԷՆՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻԻՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Լրանգ

ՀՐԳԵՀԻ ՃԻԻՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Լրանգ

ՖԵՆԻՔՍ Հաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ կարասիք:
ՖԵՆԻՔՍ Հաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային կանքի վրայ:
ՖԵՆԻՔՍ Հաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շոգինաւի՝ եւ առաջատանաւի վրայ:

Ընկերութեան գրամատուցն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, թիւ 11—16:

Ընկերութիւնն կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր ճերկայացուցիչ

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/ն 15

ՇԱԲԱԹ

9 Ապրիլ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մերիցներուն հաւակը . (Խմբագրական) . — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ : ԿՅԺԻ ԿԱՐՈՒՍ . (Մոռցուած առակ) . — ԹՈԹՈՎԻԿ : ԽՍՈՒՐՈՏՈՒՄ . — ԿԱՎՈՇ : ՏԵՆՉԱՆԳՆԵՐԱ . (Ոսանաւոր) . — ՄԵՆԱԿ : Ժողովրդական նամականի . — ԼԻՒԱ : ՄԵՐ պատասխանը . (Հայու տղջկան տաքիւ) . — ՖԱՆՆԻ : Լուրերու բաժին : 100,00 Տարի Սառնակոյսի մը մէջ . (Հանրագիտակի բերքօնը) LOUIS BOUSSENARD (Թարգմ .) Թ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ :

ՄԵՐԻՆՆԵՐՈՒՆ ՃԱՇԱԿԸ

Շատ անգամ խորհած ու մտածած եմ մեր տիկիներուն անձնական ճաշակին վրայ , բայց պատեհութիւն ունեցած չեմ խօսելու այդ է՛ն կարեւոր խնդրոյն մասին :

Մեր մէջ սա համազումը կայ որ , կիները այրերէն աւելի ճաշակ ունին , եթէ ոչ ամէն բանի , գէթ հազուադէպ կապուածի մասին : Եւ այս երթագրական գաղափարին ստուգութիւնը կրնանք հաստատել , քանի որ շատ քիչ բացառութեամբ , մեր տիկիները երբ ո՛ր է դնում մը ընելու ըլլան , իրենք անձամբ կը վերաբերուին անոր առանց վստահելու ուրիշի մը ճաշակին :

Ճաշակը , որ ինքնին նուրբ հանգամանք մը ունի , պէտք է որ կնոջ մօտ աւելի ընդարձակօրէն մշակուի , քանի որ անոնք , այսինքն կիները այրերէն աւելի փափուկ գաղափարներ ունին , կամ պէտք է ունենան :

Մեր այս տեսութիւնը իր ընդհանուր գիծերուն մէջ գոյութիւն չունի մեր Հայ տիկնանց մօտ : Մեր տիկիները այսօր , աւելի նորին գաղափարը ունին , քան թէ վայրումին ճաշակը :

Մեր մէջ շատ պզտիկ բացառութիւն մը կը կազմեն այն կիները, որոնք երբ դնում մը կամ նոր հանդերձ մը շինելու ըլլան, Եւրոպական մօտեցները չի թղթատեն ու այդ օտար ձեւերէն չորոշեն իրենց կռնակը անցնելիք հագուստը : Անոնք, այսինքն կանանց մեծամասնութիւնը, սովոր է օրերով շաբաթներով քրն-նել ու զննել օտար ձեւերը ։ օտար ճաշակները, առանց մտածելու թէ կը յարմարի՞ իր կազմուածքին, տարիքին, կամ կացութեան : Ահա խնդիրը :

Անոնք, այսինքն մեր Հայ կիները, որոնց հարիւրին ութսունին մօտ կը պակսի ձեւն ու կարը, ժամերով մօտաւորին դէմը անցած իրենց հագնելիքին ճաշակը, ձեւը, անկէ կսպասեն ու անոր կապակիսին առանց իրենք ալ իրենց կողմէ բան մը յղանալու : Մօտեցին մէջ տեսած մէկ պատկերնին օրինակ առնելով, նոյնը կ'ապսպրեն ու կը հագուին առանց մտածելու թէ, նոյն այդ ձեւը իրենց դէմքին, մարմնական կազմին վայել՞ւմ է թէ չէ :

Դիտեցէք ու պիտի հաստատէք մեր ըսածը :

Երբեմն չափազանց դէր կիներ կը տեսնէք, որոնք իրենց պարտաւոր մարմինը ամփոփած են նեղ ու սեղմ հագուստներու մէջ, որ դուրս կուտայ վզէն մինչև ոտքերը մարմնոյն բոլոր ձեւերը, մինչդեռ երբ իր ճաշակին և մարմինին յարմար քիչ մը լայն ու տարբեր ձեւով մը պարտկուէր, այն ատեն դիտողը գաղափար չպիտի ունենար մարմնոյն մասերուն վրայ :

Նոյն բանը կրնանք ըսել նաև գլխարկներու համար :

Ինչպէս վերը ըսինք, մեր Հայ տիկիներու միակ փափաքն է նորը և նոր-վօրէն :

Երբ եղանակին յարմար գլխարկ կապել տան, իրենց փնտռածը ճաշակէն, դէմքի վայելումէն առաջ նորվօրէն է, ու անգամ մը որ համոզուեցան անոր՝ օրուան նորոյթէն ու Եւրոպական շինուածք մը ըլլալուն, զինին բարձրութիւնը նկատի չեն առներ, ու կը դնեն կը գործածեն : Մինչդեռ գիտող մը չի կրնար իր խընդուքը զսպել կատարեալ քաղիքաբիր մը հանդէպ :

Երեւակայեցէք մինեօն դէմք մը, որուն վրայ կը բարձրանայ վաթսուն սանթիմի շրջագիծով ահագին զանգուած մը, առանց հաշուելու վրայի բարձրադիր եկոնքները, ջանքեղները, ժապաւէնները, որոնք ալ աւելի ճոխ ու լայնատա-րած տեղ մը կը գրաւեն գլխուն վրայ :

Բայց . . . հերիք է որ նորվօրէն է, այսօրուան վերջին նորաձեւութիւնը, որ կրողին ճաշակին վրայ մեծ գաղափար մը կուտայ դիտողին :

Այսպէս և ասոնց նման տարօրինակութիւններ չեն պակսիր մեր Հայ տիկ-նանց մօտ, մինչդեռ իրենք կը պարծին իրենց նրբին ճաշակին վրայ, ու չեն նե-րեր կամ չեն թոյլատրեր որ իրենց ամուսինները գնում մը ընեն, քանի որ . . . ճաշակ չունին :

Իմ մասին պիտի ուզէի որ մեր Հայ տիկիները զատ զատ աէրը ըլլային իրենց ընդոծին ճաշակին, ու կոյր զկուրայն չի հետեւէին օտար թուալէթներու :

Դիտէ՞ք, բուն նորվօրէն և ու յա մօտ ըսուած ճաշակը, որոնց հեղինակու-թիւնն է . . . :

Թող ներուի ինձ խոստովանիլ հոս, եթէ երբեք պատշաճութեան դէմ չըլ-

լար, թէ նոյն այդ եւրոպական տեսակ տեսակ խեղկատակ ու contre nature նոյն թշները, եթէ ոչ ամենքն ալ, գէթ մեծամասնութիւնը, կարգ մը թատերական առթիւքներու, շանթեօգներու քմահաճ խելապատակէն պոռթկացած imaginaire բաներ են, զորս խենթի պէս կը կապկեն մերինները:

Անոնք, այսինքն, այդ կարգի կիներ, պէտք ունին ցուցադրուելու, ինքզինքնին դուրս տալու, ամէնուն աչքը իրենց վրայ հրաւիրելու իրենց . . . արհեստին բերմամբ, և ահա այդ նպատակին համար ոչինչ կը խնայեն ու միշտ նոյն թշներ կը յղանան: Մինչդեռ մերինները կարծեմ պէտք չունին ցուցադրուելու, ուշադրութիւն գրաւելու: Այլ պարզութիւնը, պատշաճութիւնը, կոկիկութիւնը պէտք է ըլլայ իրենց արտաքինը. այն ատեն դէմքերը, մարմինները աւելի շնորհալի երեւոյթ մը պիտի առնեն ու մենք դիտողներս մէկ ակնարկով պիտի կրնանք զատել, սրտել զիրենք այն կարգ մը կիներէն՝ որոնց արհեստը արտաուայ քուայէթ մը կը պահանջէ:

Քիչ մը ճաշակ ունենանք տղնուռհի քոյրերս, ձգենք պահ մը կապկութիւնը, և հագուստ մը, գլխարկ մը չինել տուած տառնելիս ուրիշներէն առաջ նախ հայելիին մէջ մենք մեզի հաւնինք, մեր անունին, պատիւին պատշաճեցընենք մեր տարազը:

Այս էական և անհրաժեշտ պարագան նախ մեր տանտիկիները պէտք է ըմբռնեն, գործադրեն, և տալա այնպէս վարժեցնեն իրենց հասուկ օրիորդներուն, չի պղտորելու համար զանոնք ապագային, ալ աւելի խեղկատակ նորութիւններու մէջ, զորս եւրոպան ամէն օր մեր առջև կը պարզէ:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԿԾԾԻ ՀԱՐՈՒՍՏ

ԿՐԷ ԿՈՐՈՒՍՏ

ՄՈՒՑՈՒԱԾ ԱՌԱԿ

— « Ամառն աղէկ անցուցինք, (կ'ըսէր մարդը ինքնիրեն՝ իր աւանակը խորհելով). դառնին աղւոր խոտերէն
« Կեր հանեցինք անպիտանին, տերեւ-մերեւ, սեզ ու փուռ
« Ձրի՛ ձրի՛ կրծեց կերաւ, իր փորիկը պանեց կուռ:

« Ձրմեռ է արդ, կանանչներնին վրայ սրկին ծառ ու խոտ.
« Ծախսին դուռը լայնկեկ բանալ, ահ իմ գործիս կուգայ կո'ք . . . :
« Լոկ իր փորի՛ն՝ օրը հանգի՛ս կ'երթայ կոր չորս դահեկան:
« Հօ'րս է պատուէր. — « Խընայութեամբ օսի՛ր Դիլլոյ շարէ՛ր կան »:

« Չորս դահեկան , ամսրան մեջ հարուր քսան . ուհա՛ւ . . .
 « Ինձո՞ր ընենք : — Կեցի՛ր . Մտախ ու Վարժութի՛ւնն ողջ ըլլալ .
 « Պէտք է զեղջել , պէտք է կտրել իր ուտեստի քանակէն .
 « Ասոր համար եւն ինծի դեմ միթէ պահել կրնա՞յ քեց » :

Կծծի մարդու ծո՛ւռ . դասասան : Ապսպրեց ծառային
 Որ ամէն օր յարդն ու գարին փչի՛կ ուտէ կենդանին .
 Դընել առջին՝ ասոր մէ՛կ ափ պակաս , վաղն ալ՝ երկերկու ,
 Մինչեւ որ եւն ընտելանար նոյն իսկ ծո՛ւս ալ պահելու :

Շուտով ըզգաց եւն այս զրկանք , ու ըսկքսաւ քալել գէշ ,
 Զըռալ , կից քալ , (ինչ որ անուես կ'ընէ տղոն ամէն ետ ,)
 Ու նաշիկին ճի՛ւղ վրայէն , — իբրեւ համեղ աղանդեր , —
 Շըռա՛խ տուռ՛ւխ . . . լանջէն , մեղքէն ու յետոյէն ծե՛ծ կ'ուտէր :

Համակերպիլ դժնէ բախտին . ա՛ս կը մընար լոկ միջոց ,
 Պուս մը գարին ծամած պահուն՝ ծամծըմելով բիւր յիւղ :
 Ամէ՛ն ծուծի պակաս կերաւ , մի՛ւս մի՛ւս պակաս , հուսկ ապա՝
 Ախոռին մեջ լըման օր մը մընաց ասանկ ծոմապահ :


Յաջորդ առտուն , երբոր տերը ախոռին դուռն ափ առաւ ,
 Հե՛ք գրաստը գետնին ինկած՝ սասկած եր հոն ծուծ-ծարաւ :
 — « Թե՛ւ . . . ձայնեց , Լ՛ւ — Ժարժը-ցո-ցին՝ առնա-նէ-տն ու ծո՛ւն ,
 Խեղճին կե՛անք կարճ է եղբր » : .

×

. . . Ինչ ալ կոկիկ խելք ունից
 Կարգ մը կրծոս մեր հարուստներ : Զատիկ կուգայ , երբ ուտի
 Դուր իրենցմէ ըսակ խնդրեմ աղբաս տղոց հագուստի ,
 Իւղագինի , — սակաւ քալու չէն խղճմբիւր , մի՛ւս սակաւ .
 Այդ անընթաց խընայութիւնն քե՛ր սեպելով է՛հ հարկաւ ,

Եւ կամ առջիդ պա՛ս քաշելով . չի խորհելով որ սակայն
 Տարուէ տարի շի՞ք շի՞ք բան մը կը կորսուի իրենց լա՛յն ,
 Պե՛րն համբաւէն , եւ քե օր մը կրնա՛ն մեռնիլ վարկ , պատիւ ,
 . . . Ողորմութիւնն անգոսնելէն , գործ տեսնելէն անհաշիւ :

ԹՈԹՈՎԻԼ



ԽՕՍՈՒԸՌՏՈՒՔ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

մեքսիկոյն :

(Կամակ մը , զոր ընթերցողներն ալ կրնան կարդալ , եթէ փափաքեն :)

Հիմա ըսին ինծի թէ քու մեծապատուութիւնդ յօդուած մը ուզեր է իմ մեծապատուութենէս , և հիմա իսկ գրասեղանիս առջեւ անցայ՝ ծնելու համար մէկը իմ այն ֆանթեզիներէս , ուր պիտի բաղձայի թափել միաբնի ամբողջ եռանդը և գրչիս ամբողջ մեղանը :

Նիւթը , սիրային ժամադրութեանը հաւատարիմ օրիորդի մը պէս , հագուած սըքուած կը ներկայանայ առջիս , և հազիւ կը պատրաստուիմ սկսիլ , յանկարծ անդիմադրելի փափաք մը կը գգամ՝ փոխանակ ընթերցողներուս հաշուոյն յօդուած մը արտադրելու , քիչ մը քեզի հետ գլուխ գլխի խօսուելու , — ո՞վ սիրելի բարեկամդ իմ՝ Վահան ֆափազեան , իմբագիր-Տնօրէն Հանրագիտակ ազգօգուտ չաբաթաթերթին :

Ու , գիտես , վեց ամիսէ աւելի կ'ընէ կարծեմ որ իրարու հետ չենք խօսած : Սակայն , ասիկա պատճառ մը չէ որ , վեց ամիս ետքը , նորէն իրարու հետ չխօսինք :

X

Կը խորհիմ թէ ի՞նչ պիտի ըսեն հիմայ երբ վեց ամիս՝ ծովու ձուկի մը չափ լուռ մնալէ ետք , դարձեալ երեւան կ'ելլեմ : — Առանց « մնաք բարով » մը ըսելու անյայտ կ'ըլլամ , և ահա՛ այսօր նորէն մէջտեղ կուգամ՝ առանց « բարիլոյս » մը ըսելու :

— Սկզբունք չունի . . . :

Պիտի ըսէք հիմա ինծի համար :

Իրաւունք ունիք , սկզբունք չունիմ , և ասոր համար կը պարծենամ :

Ըստ իս , զարգացած մարդ մը պէտք չէ որ երբէք սկզբունք ունենայ , և չպիտի ուզէք անշուշտ որ ես զարգացած մարդ մը չըլլամ :

Ի՞նչ գաղափար կարելի է կազմել մարդու մը վրայ , որ մինչև կեանքին վերջին շունչը « չէ՛ » կ'ըսէ , որովհետեւ օրին մէկը՝

անուշադրութեամբ բերնէն « չէ » մը փախաւ :

Աս մարդը՝ սկզբունքի տէր պիտի անուանենք . — ասանկ սկզբունքը թո՛ղ պակաս ըլլայ :

Որովհետեւ , օր մը , ձիւնին համար սե է ըսինք , պէտք է մինչև վերջը պնդենք թէ ձիւնը ձերմակ չէ , քանի որ , հակառակ պարագային . . . սկզբունքի տէր եղած չենք ըլլար :

Կամ , ենթադրենք թէ՛ անխելք մարդու մը նկատմամբ օրին մէկը անխելք ածականը սուտած ըլլանք իրաւամբ : Սակայն շատ անգուրբ բան պիտի ըլլար մեր ածականին վերայ պնդել , երբ մարդը խելացիցած է ա՛լ :

Սկզբունք . . . վէպի հերոսները և թատերախաղերու grand premierներն են որ միայն ունին այդ երանելի ապրանքը , որ հիմա քաղաքավար կառապանի մը կամ կենցաղագէտ բարապանի մը ու փափկանկատ ժամկոչի մը չափ հազուագիւտ բան մը դարձած է :

Ըսէ՛ք ուրեմն , քսաներորդ դարուն սեմին վրայ , ծիծաղելի չպիտի ըլլար այս տողերը գրողը , երբ յայտարարէր թէ՛ ինք սկզբունքի տէր մարդ է : Ա՛ , քա՛ւ լիցի , սիրելիս , ես այսչափ պատիւ չեմ կրնար ընդունիլ :

Չկարծէք սակայն որ ես սկզբունք չունիմ : Ներեցէ՛ք , ես ալ ունիմ , բայց սատարեցրութեամբ որ իմ սկզբունքս . . . յոգնակի է , և թէեւ ես ալ ճի՛շդ ձեզի պէս սկզբունքի տէր մարդ մըն եմ , բայց միմիայն ի՛մ ըմբռնած եղանակովս :

Մէկ սկզբունքս՝ օրը քսանըչորս անգամ կրնամ փոխել , և ասիկա յառաջդիմութիւն կը դաւանիմ : Հիմա ձեզի՛ կը գովեմ , դա՛յն կը պարսաւեմ , ինչ որ պատճառ մը չէ որ վայրկեան մը ետքը , ձեզի՛ պարսաւեմ և դա՛յն գովեմ : Դարուս պահանջը , սիրելիս , ի՞նչ կ'ընես :

Յաճախ երեսս կը դարնեն թէ ինչո՛ւ միշտ մի և նոյն թերթերուն չեմ աշխատակցիր , և չարունակ մէկը կը ձգեմ՝ միւսին ցատկելու համար :

Միամիտները՝ չեն կրնար հասկնալ թէ ասիկա կ'ընեմ միմիայն անո՛ր համար , որ-

պէս զի աղէկ մը հասկնան թէ . . . սկզբունքը չունիմ :

Ասկէ զատ , ասոր մէջ ուրիշ կէտ մըն ալ կայ : Երբ այս թերթին մէջ գրեմ , ա՛լ ամբողջ իրաւունքը կ'ունենամ միւս թերթին աշխատակիցները քաջքշելու՝ միշտ իմ աշխատակցած թերթիս ինպատու :

Ամիս մը ետքը , քննադատած թերթիս կողմը կ'անցնիմ և հոնկէ ուղածիս չափ սըլաքներ կը նետեմ՝ ամիս մը առաջ պաշտպանած թերթիս աշխատակիցներուն : Եւ ժամանակը կ'անցնի , և on s'amuse !

Երեւակայեցեք , ի՞նչ պիտի ըլլար վիճակս , երբ դատապարտուէի միշտ մի և նոյն թերթին մէջ մնալ և միշտ դիմացիներս ձաղկել , առանց բերանփոխ մը ընելու :

Ասիկա՝ Աստուծո՛ւն օրը կաթնապուր ուտելէ աւելի անհամ չը՛ պիտի ըլլար միթէ :

X

— Ուրեմն , ուղղութիւն չունի՞ս դուն , պիտի վճռէք :

Ո՛վ ըսաւ ձեզի թէ ես ուղղութիւն ուր չիմ , ասիկա ինծի նախատինք մըն է պարզ զապէս :

Իմ ուղղութիւնս . . . անուղղութիւնս է :
Ուղղութիւն . . . գը՛շդ ! fiche moi le camp !

Երկաթուղիին գիծը ուղղութիւն ունի , սակայն ես երբէք չեմ յաւակնած . . . երկաթուղիի գիծ ըլլալ :

Ու երբ կը մտածեմ թէ այս աշխարհիս վրայ ամէ՛ն մարդ ունի ուղղութիւն մը և սկզբունք մը , երբ կ'երեւակայեմ թէ ամէն վարժապետ , ամէն խմբագիր , ամէն վաճառական , ամէն թաղական , ամէն հոգաբարձու , ամէն չուկացի , ամէն ոսկերիչ և ամէն քիթփիթոս իր ուղղութիւնը եւ իր սկզբունքը ունին , խա՛չ որ , փոխելս կուգայ և ես կը նախընտրեմ քնաւ ուղղութիւն և սկզբունք չունենալ :

Աս որչա՛փ ուղղութիւն , աս որչա՛փ սկզբունք , Աստուած իմ , ասոր համար է թերեւս որ մեր վարժարանները տակաւին ուղղութիւն մը չեն ստացած և մեր խմբագիրները դեռ որոշ սկզբունք մը չունին :

Գոնէ ես անկեղծութիւնը ունիմ մեղքս խոստովանելու , սակայն ի՞նչ ըսեմ այն կարգ

մը խմբագիրներուն , որոնք առտու իրիկուն , ուղղութեան ու սկզբունքի վրայ խմբագրականներ գրելէ ետք , բաժանորդագրութեան մը փոխարէն , իրենց ամէնէն անխախտ սկզբունքները կը խախտեցնեն :

Ադամ Եւա ու է ուղղութիւն չունէին կարծեմ , մինչդեռ հիմակուան մարդիկը խել մը ուղղութիւն ունին : Եւ զարմանալին ա՛յն է որ , Ադամ Եւա՝ հիմակուան մարդերէն աւելի ուղիղ էին :

X

— Զարմանալի՛ մարդ ես , կ'ըսէր առջի օր բարեկամներէս մին :

— Ինչո՞ւ զարմանալի ըլլամ , հարցուցի՝ որովհետեւ վրաս զարմանալիք մը չէի տեսներ :

— Ես քու տեղդ ըլլայի , Մանգուսէին տո՛ղ մը չէի գրեր :

— Պատճա՞ռ :

— Որովհետեւ քեզի դէմ ձայնափ գրեցին :

Ո՛վ սիրելի բարեկամս , որ եթէ իմ տեղս ըլլայիր , Մանգուսէին տող մը անգամ չպիտի գրէիր , բարեբաղդաբար չատ գո՛հ եմ որ ես քու տեղդ չեմ և Մանգուսէին կը գրեմ :

« Զարմանալի մարդ » կը կոչէր զիս . բայց , ես զինքը ինէ աւելի՛ զարմանալի կը գտնեմ , երբ ինչան բարեկամութեան , կը զգածուի ինծի դէմ եղած բանէ մը , ուրկէ սակայն . . . ես չեմ զգածուիր :

Հիմակուան մարդիկը արդէն չատ դիւրագրգիռ կ'ըլլան կոր :

Անցեալ օր Միմոսին Օրագիրին մէջ մեր խմբագիրներէն մէկը քաջքշած էի քիչ մը իբր կատակ :

Ու նոյն իրիկունը , դէպի գտնելըստուն մը փութացած ատենս , պարոնը դիմացս ելաւ : Ուղեցի խուսափիլ՝ գարեջուրս չպաղեցնելու համար . սակայն , խմբագիրը կարծես զիս ծեծելու համար , վրաս վազեց :

— Ի՞նչ կ'ուզես ինէ , աղբա՛ր , պօռաց զայրացած չեչտով մը :

— Բան մը չեմ ուզեր , պատասխանեցի :

— Ինչո՞ւ իմ վրաս կը գրես :

— Հապա որո՞ւն վրայ գրեմ :

— Գիտցած ըլլաս , ես կը ժողվե՛մ , կը ժողվե՛մ , ու ամէնը մէկ տե՛րս կը հանեմ :

Ու կ'երեւի թէ . . . դեռ կը ժողվէ կոր :

X

Շատ մը մարդիկ՝ իրենց եղած գրական հրապարակային ակնարկութիւնները շատ au tragique կ'առնեն ,

Օրինակի համար՝ սա՛ Սամահայիները :

Չեմ գիտեր կարգացի՞ք իրենց վրայ գըրածս , որ աւելի ընդհանուր բան մըն էր և ո'չ ոք իրաւունք ունէր առնուելու :

Սակայն , եկէք տեսէք որ ամէն մարդ առնուեր է , և ստացայ մէկէ աւելի նամակներ , ուր զիս ետեւէ ետե կը կոչէին .

« Սրիկայ , ստամբակ , հանած վարած , թեթեւօլիկ , հաւկիթ , գապոթէն , իմաստակ եայլն եայլն եայլն » :

Սակայն զարմանալի է որ , ես , ինծի ուղղուած այս սիրուն complimentներէն և ո'չ մէկէն . . . առնուեցայ :

Caractèreի խնդիր , չէ՞ :

×

Կարծեմ , այս յօդուածիս մէջ ինքզինքս բաւական գովեցի , և ամէն պարագայի մէջ , ասիկա՝ ուրիշները գովելէն աղէկ է :

Եւ դեռ պիտի շարունակէի խօսուրդաւորս , սակայն դիտէ՛ որ կէս ժամէ ի վեր , առանց շունչ առնելու , միամիտակս կը խօսիմ կոր :

Բայց , պէտք է գիտնալ թէ , մարդ ո՛ր-չափ ալ շատախօս ըլլայ , նորէն . . . քունը կուգայ :

ԿԱՎՈՕՇ

ԳԱԼ ՇԱՐԹՈՒ

ՀԱՅՐԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐԸ

PAR

ԿԱՎՈՕՇ

ՏԵՆՁԱՆՔՆԵՐՍ

Մանուշակի ու անբուշի բոյրերովը մեղմագին ,
— Խնկաւէտած յար եւ նման եղեմական բոյրերուն —
Դեռ այրազան , երփներանգոս ծաղիկներով զարդարուն
Պարսէզ մ'ըջար ճիշդ փոփկը արագահոս գետակին :

Հարսի մը պէս պճնազարդուած այդ պարսէզէն փչ հեռուն ,
Տուն մ'աչ ըջար հսկայի մը սիգապա՛նծ , վէս կեցուածքով ,
Ու այդ վայրը՝ գիշերուան խո՛ր , շուրթեան մէջ անվրդով ,
Թո՛ղ փողփողէր , քո՛ղ պրիտնակուէր մեջը փարքամ յոյսերուն :

Զո՛ւ վ գեփիւռէն հրմայարափ զարնան աղուո՛ր գիշերով ,
Այդ յուսաափիւռ պարսէզին մէջ պրօքսէիւն յամրաբար ,
Ու երկընթիւն ցոյժերովը շրջապատուած՝ ընդ երկա՛ր ,
Լուսաճաճանջ , պայծառ յուսինն ըմբոշխնէիւն հոգեքով :

Սա մեկնութեան , երանութեան , յուռ վայրին մէջ՝ միմիայն
Մենք երկուքս՝ փաղցրանշաղ դայրայներով տիւսակին
Ու մեղրանուշ , սիրաբողբոջ գեղումներով ցնծագին ,
Ընկողնանաճ , յա՛մր , անքրտունջ օրորուէիւն յափստան :

ՄԵՆԱԿ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Մեծ պահքի սա վերջին շաբաթին կը փափաքեմ կարգ մը արու էգ բարեկամներու հասցէին մրտեղ իմ արտաբուխ խրատականներս, որոնք եթէ չեմ սխալիր, պիտի կրնան Հօլուէի դեղահատներէն աւելի անմիջական ազդեցութիւն մը ընել իրենց բարոյական ախտին, ախտին՝ որոնցմէ վարակուած են խեղճերը:

Ասով հաւատք ունիմ թէ՛ կարեւոր գործ մը տեսած պիտի ըլլամ, և որ աւելին է, բոլորովին անկուտի, այնպէս որ, մեկնման ատենս բէշ վեր առնելով միտներու տակէն այծստինքներու պէս կախ գրպաններէն մէծիտներու ձայներ չպիտի ելլան, ոչ ալ օրագրի մը margeին փաթթել հարկ պիտի ըլլայ անուշ դեղին մետաղը, այլ սոսկ ցըրուիչին ձեռքը մինեօն քառասուննոց մը դընելով պիտի ունենան իրենց քրոնիկ ախտին դարմանը:

Օն ուրեմն, կսկսիմ նախ ամուսնացու երիտասարդ բարեկամէս, որուն հիւանդութիւնն է 500 ոսկիով աղջիկ մը ունենալու փափաքը:

Սիրելի բարեկամս,

Ամուսնութիւնը հարկ անհրաժեշտ ըլլալը նախաճնողքէդ սովորած ըլլալդ գիտնալով, քու առնական զգացումներուդ շէքքան քիլիտի զարնել չէ միտքս: Ամուսնացիր, ատիկայ որչափ իմ, քու և ծնողացդ փափաքն է, նոյնչափ և կարելի է քիչ մ'ալ աւելի Տիկին Թոռոտիանն ալ է, որ իր հոգեհատորուն գլուխդ փաթթելու համար չապիկիդ կոճակը լուացարարունէն խընդրելով դեղ ըրած է խեղճ միամիտը:

Գիտեմ թէ 300 զրուշ ամսական ունիս, և 3000 զրուշ ալ պարտք չորս դին, բայց ատիկայ բան մը ըսել չէ քեզ համար, քանի որ ոչորուն պէտքերդ, բէրտահիդուսթքուալդ, բըթարըթ գուլպաներդ մեծ յոյս կը ներշնչեն en un compte սրբելու սկըդելու բոլորը: Գիտեմ նաեւ թէ, կին մը սիրաշահելու սխիթէ ին, ինչպէս անոր բոլոր զարտողութիւններուն յաւելուածներուն տեղեակ

ես, ու կրնաս օրիորդ մը ձեռք ձգել այնպէս դիւրին, որչափ պիտի կրնայիր կայծոռիկ մը բռնել ծաղկաւէտ պարտէզի մը մէջ:

Աչքերդ մարեցնելով ակնոցիդ տակ Մառսեյի գի մը հարազատ ոճով ամուշ . . . ըսելու կարողութեանդ վրայ վստահ, չեմ կըրնար կասկածիլ թէ ինքզինքդ չի կրնաս ծախել՝ սիրտիդ սիրածին, հոգիիդ պաշտածին: Բայց . . . : Հոս ներէ որ ջրվէժին շիւթին մօտ ձեռք տամ, միտք տամ քեզ վերջին անգամ մ'ալ զգուշացնելով մահուան անդարձ բնոյթին և իրականութեան վրայ:

Քու ամուսնական միտումդ, գաղափարդ լսող տիկիններ, վաղը սոթթաւորած թուեցիկի պոչի պէս պօնուռիդ փէշերէն պիտի կախուին, որը, 500 նոց չէք մը, որ մէկը Սալմաթմուրք երկյարկ տան մը մէկ տիրեկին արժէքը, ուրիշ մը Թօփ-գաբու խանութի մը բանալին և . . . կարելի է գտնուին անանկներ ալ, որոնք իրենց թարմ գեղեցկութիւնը իբր գործիք բռնած, մեղուններու պէս բզզան ականջիդ, և դուն ատոնցմէ մէկուն կողմը դառնաս, կապես ու կապուիս յաւիտեանապէս, քահանան իր վերջին Հայրմբը միթմրթայականջիդ տակ, ու թե տաս լեմօնի ծաղիկներով պծնուած, խաշըխ բուտուսիով ծեփուած, ձուկի մաշայով ֆուրգէ օրիորդին . . . :

Մեղրալուսնիդ վրայ չեմ կասկածիր, անիկայ շատ անուշ կանցնի գիտեմ, որովհետեւ ամուսնական շրջանիդ առաջին շաբաթին թմրած կըլլաս, չես տեսնար, կոյր հետեւող մը կըլլաս տրիփիդ, որ կը մտրակէ քեզ: Նախորդ գիշերուան քիս մի քուիքի բոյրը, որ կնոջդ մազերէն կը բուրբէր, հիմա դադրած է ալ, ու սոսկ թեփի, աղտի ծանր հոտն է որ քիթդ կը խտխտացնէ, մանեհդ առնելու պէս թթու գիծեր յօրինելով բերնիդ երկու կողմը:

Ութ օր անցաւ . . . ի մեծ ցաւ հէ՛:

Ո՛ւր կը փնտռես բըթիք մատամիդ խոպոպները, որոնց ի տես բերնիդ քովերէն

սոյիման ունեցողի մը չողիկները կը վազ-
ցընէիր : Ի զուր կը փափաքիս տեսնել այն
սպիտակ ու վարդագոյն այտերը, որոնց չէիր
խմբեր նոյն իսկ ճկոյթ մատիկդ դպցընելու :
Ու ալ ասիեօ նազանք , և չփացածութիւն ,
որոնք կինը անգամ մը ևս կը գեղեցկացնեն :
Հիմա , քոյր եղբօր թէքիֆսիզութիւն մը
սկսած է մէջերնիդ : Տիկինդ չի քաշուիր
քնէ , դէմդ բուրդ գուլպաները եօքէյիմիլ
ընելու , աղտէն մար կապած տոտոխները
քիթիդ տնկելով : Գործը գործէն անցած է
ալ , անիկայ քու մէջդ է և դուն անոր մէ-
ջը : Անիկայ պէտք չունի այլևս իր նախորդ
նազերուն՝ զքեզ փայփայելու համար , էրիկս
է կրսէ ու կը միսիթարուի , և միայն այդ
բառին մէջ կը գտնէ իր կանացի ազատու-
թիւնը , հանգիստը , և ամենայն ինչ որ թա-
գուն ունէր իր մէջ , մեծ այոյն առաջ :

Ան ձուլ ճերմակ ակոսներուն վրայ, որոնց
ի տես դուն ալ փափաք մը կը գայիր արիւ-
նոտելու չափ չփել քուկիներդ , հիմա ժայ-
ռերու մամուռներ ծեփուած են գորշ կանաչ
գոյնով զոր տեսնելով , առանց բալթօի փողոցը
գտնուելու պէս փուշ փուշ կըլլայ մարմինդ
և դուն՝ որ նոր փեսայ մէկ երկու շոգենաւ
կը փախցընէիր չուկայ երթալէդ առաջ զայն
քիչ մը աւելի վայելելու , հիմա բոթիներ-
բուրդ կոճակները փողոցը կը կոճկես , հինգ
վայրկեան խնայելու համար աչքերդ այդ
աղտոտ տեսարանէն :

Խղճալի է վիճակդ , զոր զոքանչդ ի զուր
կաշխատի մեղմոյնիւ իր հին կնկան կոշտ
ճիւղէնքովը : Կը զղջաս եթէ ոչ տանը մէջ,
գէթ գործատեղիդ , ձեռքդ մազերուդ մէջ
մահուան քրտինք կը թափես անիծելով սե-
բաղդդ , որ կապեց զքեզ բարակ սիճիմով,
սիճիմ մը որ երեք սանթիմ չղթայէն աւելի
ամուր , աւելի անքակտելի է :

Դեռ չի լմնցաւ սիրելի բարեկամս , մի
ձանձրանար , մտիկ ըրէ :

Ամիս մը անցաւ ճերմակ փողկապդ ձգելէդ
ի վեր , այնպէս չէ , առած դրամօթիտդ դը-
րիր քարթիթալիդ միացուցիր , մաս մը պարտք
մաքրելէդ վերջ , համայն . . . Հիմա այլ
առակք լուարուք :

Ինչպէս ստամոքսը օրը չորս անգամ ,
նոյնպէս կինն ալ կուգէ , անոր ֆանթէզի ծախ-
քերը , քու շապիկիդ ուսպարիս օճիքիդ չեն

նմանիր , գլխարկի մը էկոէթը , կէս ոսկի ,
երկու շուքսան դրուշ , տանթէլ , կապող-
չէք երկու ոսկի , ֆիստանի կարողչէք մէկ
ոսկի , կերպաս երկու ոսկի , պօթ հովանոց
մէկ ոսկի , բոստուր տը ուի 10 դրուշ , և ա-
սոնք տարին երեք չորս անգամ :

Աւելին կայ :

Տիկինդ քոյրեր ունի , որոնք քու ձեռքդ
կը նային , իրաւ է թէ դուն մէկ կին կը ճանչ-
նաս բարոյապէս , բայց նիւթապէս պէտք է
գիտնաս որ բազմանդամ ընտանիքի մը տէրն
ես , որոնք քու ձեռքդ քու քսակիդ կը
նային :

Ախ . . . ամուսնացու բարեկամս , զքեզ
չեմ մեղադրեր ու չեմ ամօթեր , հաւատայ
խօսքիս , դուն ալ ուրիշներու պէս տակաւ
ջուր կտրող քարթիթալդ իւղոտելու համար
թէ և նետուեցար կին աւազանին մէջ , սա-
կայն թաց խխուժ մուկ կտրած դուրս ե-
լար անկէ , pardon de l'expression !

Կինը ծաղիկ մ'է , հոտուըտայ որչափ
կրնաս , գինովցիր անով , բայց սենեկիդ մէջ
մշտնջենապէս մի պահեր զայն , անոր բու-
րումը որչափ անուշ , իր շարունակական և
յարատե բոյրը կը թունաւորէ կը հալեցնէ
քեզ :

Կեցիր որ ըսեմ : Ինչ կընես վարդ մը
կըր ձեռքդ անցնի . . . նոր բրցուցած ա-
տենդ ուտէնկօթիդ քլաբային վրայ կը կըրես ,
չէ . . . քիչ մը վերջ զայն գաւաթի մը մէջ
քօնսօլին վրայ կը դետեղես , ուր կը թօշնի
ան , կը գունատի կը բըննայ : Բլաբայիդ վը-
րայ կրած կոկոնդ , օրիորդն է՝ քեզի պէս
ազատ խուշին , երբ գաւաթը դնեն կին կ'ըլլայ
ալ թոշնելու համար : Կոկոնը քլաբայէդ մի
հաներ , որպէս զի անոր տգեղութիւնը չի
տեսնես , չի զուլիս անկէ :

Դոյդ
ԼԻԼԱ

Vis-versa

Դնքուշ բուբէս ,

Խոստացայ գրել քեզ այս շաբթու սիր-
տդ ասխընտող նիւթի մը վրայ , որ իր
կծու դառնութեան մէջ կարծեմ անուշ հե-
տեւութիւններ ունի , զորս վայելելու բաղ-
դը ունիս այս անգամ , քանի որ տրամադիր
եմ խոստումս կատարելու :

Իմացայ թէ միտքդ փոխեր ես վերջա-

պէս, որոշիր եւ մազերդ վեր ժողուել քօսքիւմ քայեհօտ մը անցընել կռնակդ ու հակառակ նուրբ ֆիշիքական կազմիդ Տիկ մը աւելցնել անուանդ առջև :

Արցունքը երկու ծորակ ունի բաղնիքի խռոմնայի պէս, տաք ու պաղ, չեմ գիտեր թէ, ծոծրակս պճնող Լեւոն Գաբամաճեանի փողկապը ուռգող կայլակները ո՞ր կողմէն կը կաթկթին, երբ կը մտածեմ այս պահուս քու և ապագայիդ վրայ :

Բարեկամուհիս, ամուսնութիւնը քեզ և քեզի պէս օրիորդ անունով ծնած մահկանացուացդ համար անհրաժեշտ է, այնպէս ինչպէս ծաղիկի պատուաստը տղայոց :

Ձեմ ուզեր բառաւանդ մը քաշել քու բռնական իղձերուդ առջև, այլ կը փափաքեմ սինէմաթօկրաֆի պէս արագ արագ գծել այն պատկերները, որոնք պիտի գծագրուին նաքինջի ծաղկէ պսակը գլուխդ սետրիին վրայ նետելէդ անմիջապէս ետքը :

Ասիկայ կընեմ իբր բարեկամական անկեղծ պարտք մը, զոր երբեք չպիտի ուզէի վճարել նոյն իսկ հացադործիս :

Մտիկ ըրէ, կամ կարգայ, քանի որ գլորըս պիտի կարդաս, փոխան ձայնս լսելու :

Հա՛, չի մոռնամ հարցնել tout-à-fait sans façon, թէ նախաճաշդ ըրած ես, մազերդ մաշայած :

Օն ուրիմն avanti !

Հաւատացիր բուբէս, թէ քու այս ամուսնանալու փափաքդ կամ տենչդ կռահեցի, ոչ թէ հորը նայելով, կամ բախլա նետելով, այլ սոսկ ձեւերէդ, հոգիս, քու hors ligne գաղափարներէդ, զորս հրաբուխի մը պէս սկսած ես դուրս տալ վերջին սոստեհէն ի վեր, երբ . . . ա՛ն . . . :

Ինչո՞ւս պէտք կ'ըսէի ես ինծի, ամէն անգամ որ գրիչս կաղամարին ու ձեռքս թուղթին կը տանէի այս բանին տեղեկ ելլալս հասկցնելու համար քեզի, քանի որ ես և դուն այնքան հեռու ենք իրարմէ, որչափ Հնդկաչինը Զօնկուլտաքէն :

Բայց . . . եթէ ոչ մէկ մօրմը ստինքէն, գէթ Մայիսին առտուն միասին խմած կաթերնիս, և այդ առաւօտեան նորաբողբոջ ծաղկանց բոյրը զմեզ ըրաւ եղբայր քոյր : Ու չե՛ս ներեր որ իմ պարտքս կատարեմ . . . :

Ա՛ն, որ այդ իրիկունը ուրիշի մը հետ

վախելուն համար տամային կոմիթ մը տուիր — մի պահէր, տեսայ — անա այդ տըզան, ընտրեալդ է, իտէալդ . . . գիտեմ, կարմրէ հերմկցիր, բայց խոստովանէ :

Տղուն արտաքինը չլացուց քեզ գիտեմ, ամառ օրով, տաք արեւին ճերմակ լաթի վրայ նայելու պէս աչքերդ չլացան, սիրտդ կըսըլ մը եղաւ ու հոն կաթիլ մը արիւն կաթածի պէս բան մը եղաւ, աչքերդ խաւարեցան ու ալ տէրը դարձար անոր, ինք նակոյ հարսնուկ մը եղար, ու նախանձեցար թերեւս նոյն իսկ անոր ոլորուն պիսիւրէն, որոնք այտերը կը խտխտացնէին . . . քեհէ առաջ :

Այդ օրէն վերջը ստամոքսդ գոցեց իր միլինիկ դռները, ուրկէ ներս երկու չերտ հաց հաղիւ կը սեղմէին, աչքի ցաւ ըլլալու պէս միշտ խոնաւ աչքերդ չի չորցան, քօսչէդ կիսկատար մնաց բարձին վրայ, և նախկին բնոյթիդ հակառակ, որ veilleuseով կը պառկէիր, ննջասենեակդ խաւար գնտան դարձուցիր : Ասոնք գիտեմ ու կզգամ անպէս մօտէն ու կատարեալ կերպով ինչպէս պիտի զգար Ռատիքան՝ Տուտիքային համար :

Կը խղճամ, կը ցաւիմ ազնուուհի բարեկամուհիս . այս օրուան բաց օդին ծփծփուն ալիքներուն վրայէն քչած նաւակդ վաղը կոհակներու տակ պիտի սուզի :

Կեցիր որ ըսեմ :

Հաւնեցա՞ր այդ երիտասարդին որ Շիթայի և կամ Մայեռի ցուցափեղկերուն մօտ դըրուած քու քլաններուն պէս հագուած տունիդ առջեւէն կանցնի այնքան անգամ, որչափ չանցնիր կոծուկու գիշերապահ : Գիտե՞ս անոր ներքինը : Բաշալը վարտիք կը հագնի, կախորժիս, մէջքը դօռի կը փաթթէ կը տանիս, դուլպաները չորս հինգ պատուհաններ ունին զորս չիք պօթինը ծածկած է, գիտե՞ս ասոնք . . . :

Եւ սակայն կը փայլի պիտի ըսես, Կալիլէոսի չեչտով մը, ու չպիտի ուզես համոզուիլ թէ՛ ան քու պատառդ չէ :

Վերջապէս օդին մէջ կ'ըլուած բամպակ են այս խօսքերը, ականջներդ աջ ու ձախ կ'աւնեն կուտան, առանց բան մը հաղորդելու ուղեղիդ, հոգ չէ : Ի՞նչ մ'ալ առաջ երթանք :

Այդ տղան, որուն ուրուագիծը զինկօկըռաֆիէ եղած է մտքիդ ու սրտիդ մէջ,

վաղը դուռը պիտի չալէ ու ձեռքդ պիտի խնդրէ, ոչ թէ հինգ վայրկեան պարելու, այլ մշտնջենապէս օրօրելու համար քեզ:

Մտողքդ, սքօք ապրանքի մը պէս զքեզ ձեռքէ հանելու համար անոր ինը գրպանը լեցնել յանձն պիտի առնեն, ու վերջապէս ձերմակ քիրե ձեռնոցաւոր կառապանը իր մտրակին չառաչունը արձագանգելով պիտի տանի այն վեմ ուխտատեղին, ուր մարդ պաշտօնապէս կեանքին մէջ երեք անգամ կը մտնայ, կնուկքի, պսակի և մեռելի առիթով:

Անկէ դուրս, ախ հոգիս — ներէ այսպէս մտերիմ խօսելուս — անկէ դուրս ամէն բան գունափոխ պիտի տեսնես, ամէն ինչ փոխուած: Մեղորալուսինը այն կարգ մը սոսկալի ցաւերուն կը նմանի, որ տաք տաք չես իմանար (ասիկայ փորձով կըսեմ, ոտքիս կոտրելուն առթիւ) բայց տակաւ պաշտելուն, կոտորուքը կառնէ, ինչպէս նաև մտմտուքը:

Շաբաթ մը անցած թէ չէ, գիծերը կը փոխուին ամուսնոյդ դէմքին վրայ, ինչպէս նաև չիք քննիս:

Ո՛ւր է անոր մաքուր քօսթիւմը, soie de chine թաշկինակը, ուրկէ բուրոյ ցիլիքի հոտը աչքերդ կը մարմնիցնէր, և ո՛ւր սրածայր պօթերը, որոնց կծրտուքը սրտիդ թէլերը accord կընէր անոր դալուստը աւետելով:

Հիմա . . . :

Տունէն բանուած քեռիկներ, եօթնները ներս փախած, գուլպաներուն վրայէն, և . . . պատմա գիշերնոցը կռնակը, մօտդ է ան առաւօտուն աչքդ բանալուդ պէս, պիտի բըխառն ի խուռն, և հէքուի մը հետեւանօք վրան զարդարած հարբուխի ցողի կաթիլներով որոնց բիւրեղացեայ հատիկները սիրտդ վեր կը հանեն անօթի փորանց: Տակաւին ինչե՛ր, ինչե՛ր:

Ստեպ յաճախած սուառններու հետեւանօք ցաւքը ալ ունի ամուսնիդ, որոնք ամէն առտու պիտի կտրտէ սուր զմեկիով մը ձեռքերը ոտքին մատներուն մէջ պտըտցնելով:

Եւ դուն պիտի տանի՞ս ասոնք, դուն որ երիտասարդը բուրբի մը տեղ դրած էիր, և կամ անանկ կերեւակայէիր, մեծ ալոյ էն առաջ, բայց հիմա, ցուրտ պատրանքը պատանգած է քեզ ու կը զգուրիս կը սառիս, կը պաղիս . . . :

Դեռ չաւարտեցի սիրելի բարեկամուհիս, մտիկ ըրէ:

Տաճարին մէջ քահանային մօրուքին տակ դուն որ միմիայն ամուսնոյ մը հնազանդութեան խոստում տուիր, հիմա դէմդ ճատը կեսուր մ'ալ ունիս, որուն աւելի զլուխ ծռելու ստիպուած ես՝ քան թէ գլխաւորիդ, որովհետեւ այդ կինը անուշ նայուածքէն, տաք համայրէն և կանացի քծնող մեծերէն, քան չի հասկնար, ասոնք օգտակար կրնան ըլլալ ամուսնոյդ մօտ միայն, մինչդեռ կեսուրդդ ալ աւելի ֆիթիլը կառնէ զքեզ հոնպսիցի տեղ դնելով:

Ամիս մը այսպէս, անկէ վերջ . . . : Հոս ալ կը վերջացնեմ գծել իմ պատկերներս, զքեզ չը վերաւորելու և չի պաղեցնելու համար աշխարհքէն, որ ամուսնութիւն կանուանուի: Չեմ ուզեր այլ ևս շարունակել այն բոլոր տգեղութիւններն՝ որոնք ամուսնուան հողմավար ամպերուն պէս պիտի անցնին գլխուդ վրայէն, և որոնք պիտի սարսուռեցնեն քեզ, պիտի լացնեն:

Ամուսնոյդ հետ գլուխ գլխի կեսուրոջդ միտդ ուտելը աչքովդ տեսնաս, ականջովդ պիտի լսես, բերած դրամօժիտիդ մայրուն ըլլալը պիտի կռահես և չըբըբ թէպէկ մը գնել տալու համար չաբաթ մը մինչև փողոցին դուռը պիտի հետեւիս ամուսնոյդ, և երկու եռամիս դերձան պիտի սպառես մատը կապելով, որպէս զի չի մոռնայ:

Եւ անուշ բարեկամուհիս, տարի մը վերջ կրք նախախնամութիւնը ՄԱՅՐ անունը քանդակէ ճակտիդ վրայ . . . ախ . . . այն ատեն ինքզինքդ ծախուած պէտք է նկատես, ընտանիքիդ սպասուհին պիտի ըլլաս անպատճառ, ու պիտի պատահի շատ անգամներ, որ դուն հոգեհատորդ գրկած երբ տանդ դրանը առջև կրեկոյին մութ ժամերուն սպասես մանկիկիդ հայրիկին գալըստեան, անծանօթ մէկը քեզ մօտենալով պիտի ըսէ,

— Այս իրինկուն Պէյօղլու կեցաւ չպիտի գայ . . . :

Եւ գիտեմ թէ գիշերուան պաղ ցօղի կաթիլները խառնուելով կուրծքդ ի վար կաթկթող տաք արցունքներուդ գիրկդ մըրափող մանկիկիդ այտերն ի վար պիտի գալարին, ու ան ալ իր կարգին քունէն արթննալով, մամա՛ . . . պապա՛ պիտի աղերսէ . . . :

Անուշ երազի մը մէջ ապրիլը, դառն իրականութեան մէջ տապալակելէն աղէկ չէ՞:

Բոյդ

ԼԻԼԱ

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՀԱՅՈՒ ԱՂՋԿԱՆ ԱՌԹԻԻ

Սիրելի Պետիկ,

Կարգացինք Պատ. « Հանրագիտակ » ին մէջ Ձեր գրութիւնը, որուն մէջ ամենայն յանգեցնութեամբ մեզ Հայու աղջիկներս խնդրոյ առարկայ կ'ընէք մեր . . . թերու-
թիւնները մատնանշելով :

Անկեղծ ըլլալու համար քանի որ ան-
կեղծութիւնը ներկայ դարուն է՝ն մեծ ա-
ռաքինութիւններէն մին ըլլալ կը խոստա-
նայ, պէտք է ըսենք որ Ձեր յօդուածը շա-
տերուն խնդուք, իսկ ոմանց . . . փոր-
ցաւ պատճառեց :

Արդ սիրեցեալ քոյրերս՝ զիս, Ձեր խոնարհ
ծառան ընտրեցին որ, թէ իմ և թէ մանա-
ւանդ անոնց կողմէն փառաւոր պատասխան
մը տամ ձեզի, որպէս զի մէյ մըն ալ Ձեր
պոյէն վեր գործերու մէջ չմտնաք :

Նախ ձեր գրութեան առաջին դիտողու-
թիւնը նոյնութեամբ, առանց նոյն իսկ բառ
մը պակսեցնելու ձեզի կը վերադարձնենք,
քանի որ ընդունուած ճշմարտութիւն մըն
է թէ՛ աւելի կոշտ սեռին պատկանողներն
են որ հակամէտ են տձե քալելու, կարծեմ
առանց առարկութեան կ'ընդունիք ասիկայ
չէ :

Մեզմէ ոմանց համար կ'ըսէք թէ duehesseի
հովեր սուած կը քալենք ճամբան, չըլլայ որ
եւրոպացի օրիորդ մը հայ աղջկան մը հետ
չփոթած ըլլաք Ձեր . . . չորս աչքերովը,
մարդ ենք կարծեմ ասանկ բաներ կը պա-
տահին երբեմն : Բայց այսքան յառաջ եր-
թալնուս համար ալ կը յուսամ թէ ներողա-
միտ կը գտնուիք, մնաց որ եթէ հակառա-
կըն ալ պատահի հոգեբնիս անգամ չէ :

Պէտք է խոստովանիմ թէ Ձեր ըրած միւս
դիտողութիւնները նոյնութեամբ ընդունուե-
ցան քոյրերէս, և սակայն զանոնք հրապա-
րակած ըլլալնուդ համար պնքան կատողե-
ցան որ՝ անոնցմէ մին Ձեր պատուէրին հա-
մաձայն երեք օխա, իսկ ուրիշ մը օխա ու
կէս քացախ սպառեց ի մեծ ուրախութիւն
մեր փողոցի նպարաւաճառին : Վերջին պա-

հուն կ'իմանամ թէ ուրիշ մէկն ալ Ձեր
յօդուածին պատճառած բարկութիւնը մեղ-
մացնելու համար երեք օր երեք գիշեր սա-
ռի վրայ նստեր է : Եւ ի վերայ այսր ամե-
նայնի, ամէնքն ալ խօսք մէկ ըրեր են Ձեզի
բարեւ չտալ, Ձեր քալած ճամբէն չքալել,
Ձեր անցած փողոցէն չանցնել և եթէ երբեք
ճամբան դէմերնին ելլէք նոյն իսկ կռնակ-
նին դառնալ և Ձեզի հակառակ ուղղու-
թեամբ քալել : Ասոնց մէջէն այս տողերը
ստորագրողը միայն բացառութիւն ըլլալով,
այս պարագան քիչ մը մխիթարական է
կարծեմ հէ՛, ապա թէ ոչ ինչպէս պիտի կըր-
նայիք հանդուրժել այսքան զրկանքներու :

Պարտականութիւնս լի ու լի կատարած
ըլլալու համար պէտք է ըսեմ նաեւ որ՝ ըն-
կերուհիներէս մին յարմար առթիւ պիտի
հրապարակէ այն ամէն թերութիւնները ո-
րոնք . . . « Հայու Մանչը » պիտի յատկա-
նըչեն սակայն :

Արդ վերջացնելէ առաջ կը խնդրենք,
յարգելի Պետիկ, որ Ձեր մեծապատուու-
թիւնը! հաճի ընդունիլ մեր ամենախոնարհա-
գոյն յարգանաց հաւաստին :

Ի դիմաց փունջ մը աղջիկներու
ՅԱՆՆԻ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

ԶԱՏԿՈՒԱՆ ԹԻԻԸ

ՊԻՏԻ ՊԱՐՈՒՆԱԿԵ ԳՐՈՒԱԾՆԵՐ

ՕՐ. ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՌԻԷ

ԹԷՈԹԻԵ

ՅԱԿՈԲ ՏԷՐ—ՅԱԿՈԲՅԱՆԷ

ԿԱՎՈՕՇԷ

Բ. ԼՈՒԹԻԹԻՆԵԱՆԷ

Ինչպէս նուեւ

Զատիկցու Բրգալիւր յօդուած մը

ԼԻԱԷ

Մեր այն գաւառի բաժանորդներուն, ո-
րոնք տակաւին չեն զրկած իրենց բաժնի-
գիրը, չպիտի զրկուի Հանրագիտակ յաջորդ
չաբթուընէ սկսեալ : Իսկ անոնք որ կ'ուզեն
նոր բաժանորդագրուիլ Հանրագիտակի, պար-
տաւոր են կանխիկ վճարել բաժնեգիրը
մանցաբարով :

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

Մեր Ս. Պատրիարք Հայրն որ անդադար,
Պահելու համար հաստատ, անվթար,
Իր ժողովուրդին Հաւատքն ու Կրօնք,
Կը խօսի լեցուն փառքներ, որոնք,
Իր մեղքածորան բերնէն փաղցրաբոյր
Կը սփռեն չորս դին, հմայք եւ հրապոյր,
Չուզելով անցընել կեանք մը լուռ, դանդաղ,
Քարոզելէ ետք յ'Իսկիւսար, Նոր-քաղ,
Չորեքաբքի օր անցաւ Սամաթիա,
Եւ Հինգաբքի ալ չընեց Ղալաթիա,
Մինչ երկէ անխոնջ ու դժմով կայտառ,
Խրատներ բաշխեց պէրն եւ հոգեհառ,
Մայր-եկեղեցւոյ տանարն ուր վերջին
Արեւազալն եւ ձօնուած Արարչին:

Ս. Պատրիարք Հօր գաւազանակիր,
Եւ լրագրողաց հանդէպ համակիր,
Սաշլըեան եզրաս վարդապետն անգին,
Որ մէջ իր ամբողջ բովանդակ կեանքին,
Մի միայն փարոզ կարող է կարգալ,
Չասկին պիտ' երթայ փարոզել Գարբալ,
Ուր պէտք ունենին սաստիկ, գիւղացիք,
Իր փարոզներուն անլուր . . . գեղեցիկ:

Շիրինեան չըմաղ էֆենտին Գամեր,
Որ (յանգի համար) չիլի կը գամեր,
Եւ իբրեւ հարսար ու վարժ փարսուլար,
Իր գրչիկին հետ յուսէ կը խաղար,
Ի. ծառայութեանց իբրեւ վարժ արժան,
Մեզ համար եղաւ դժմ մը պատուարժան,
Եւ կարգընեցաւ օժանդակ մ'անգին,
Վերջին շաբթուան մէջ այս Մեծ-Պահին,
Գործակատարին առաջին, աւագ,
Քուէարկութեամբ մը միանուագ:
Մաղթենք որ սրտանց, Տէր Աստուած հրգօր,
Մեծացուցանէ դեռ զինք օր քան զօր,
Որպէս զի դրպիրք ամբողջ, համօրէն,
Թէ աստ եւ քէ անդ զինք փառաւորեն:

Նախ քան յիսուն ամ, ծընեալ ի Շաքագ,
Եւ այժմ իբրեւ հայր հոգեւոր մըքակ,
Տէր Կարապետ Հայրն ընտիր, ալեփառ,
Որ փաղափս մէջ շրջէր ի քափառ,
Շաբթուս մեկնեցաւ զըւարթ ի Պուրսուր,
Իբրեւ տեղացւոյ հոգեկան տրիսուր:

Տեարք Ալիքան, Գալուս եւ Օզսէն,
Որոնք զաս իրենց նուրբ ստամոքսէն,
Կը խորհին վազել բարիքի ճամբէն
Եւ իբր ոսկերիչ, գոհար կը ջամբեն,
Անձնութեամբ մաքրել փութացին
Խաղաղիկի հըսկայ մեծ եկեղեցին,
Որուն անօթներն հիմա սրբազան,
Կը շողողան զերդ ոսկի այլազան:
Մաղթենք որ բարի Սիւնոն Ծերունին
Կատարէ փութով ինչ ուխտ որ ունին:

Թէլեան, Էմեստրենտն անձեր երկուքին
Որ աղփատ շրջոյց հանդէպ կաթողին
Մեր մ'ունին եւ միտ յարգանք կը շահին
Թաղեցւոյ կազմէ Կեսիկ-Փաշային,
Նուէրներ տրին, կերպասով հանդերձ
Որպէս զի շինուի զգեստ կամ հանդերձ:

Օրաբերքերէն իմացաք հարկաւ,
Թէ իր գաւակին բուժման աղագաւ,
Կ. Խորասանեան Տիկին Էլիզան,
Բարեկալ տակ գործոյ զանազան,
Բաշխեց ոսկիներ, մաքուր ու դեղին,
Եւ իւր նուիրեց ժամուն կանթեղին:

Ուսում. Խորհուրդին մեր անդամներուն
Մեզ իբրեւ երեք եւ իբրեւ ներհուն
Ու վարժարանաց բարւոյն ի խնդիր
Երկար ատենէ ի վեր անձընդիր,
Եւ միտ օգտակար քլալու հուրհէն
Անուանի եւ Մեծ. էֆենտին Գուրգէն
Նրեկուան նստին՝ նորէն, խստադէմ,
Ծանօթ ծրագրին խօսեցաւ ընդդէմ
Որպէս զի մինչեւ կրթական տարին
Բարեփոխումներն քլան կատարին:

Մանգուլէի մէջ կարծէ որ կարդաք
Եւ հանդիմ' զգաք սրտով բովանդակ՝
Այն չըմաղագիւտ յօդուածն « Էֆէրէ » ն
Ուր ծընած է մեր մրտի բերքերէն
Ռուսիան փայլուն Նահապետն անգին
Կարկառուն մէջ մեր մտաւոր կեանքին:
Բայց յօդուածագիրն մոռցած է բնի,
Թէ նաեւ ծընունդ առած է անի
Յ. Տէր-Յակոբեան խմբագիրն որ աս
Դարուս մէջ շրջէր դժմ մըն է նորհաս:

ECHO!

ԾԱՂԻԿԻՑ

Անգլիական ճիշդ ուսանելուի մը պէս Ծա-
ղիկ սպասուած ատենին բուրեցիր... caliceէն:

Մեր առջի չարթուան թիւին մէջ, խմբ-
բազրական յօդուածով մը երբ յաջողութեան
գաղտնիքին ընդհանուր գիծերուն վրայ կը
խօսէինք, յօդուածը վերջացնելու մօտ երկու
տողով կարեւորութիւն տալու սխալը գոր-
ծեցինք, այդ գամէլէօնը վարող քիթապ-
ճիններուն անտեղի հիւրընկալութեանը:

Եւ ահա «խորհուրդ մեծ և սքանչելի» ու
կը հրաւիրեն իրենց chefr՝ Մոլորակը ու կը
մոլորեցնեն «սըւոր զօռնու ճուղայ մը տուր»
ըսելով: Քիթապճիններէն ասկէ աղնիւ բան
մը չէինք սպասեր արդէն:

Ձենք ուզեր հոս ըսի-ըսաւի անհարկի
դուռ մը բանալ կարեւորութիւն տալով ի-
րենց ՎԱ(ԹՄՈ)Ն և ՀԻՆԿ տողերուն, ու կը
գոհանանք ըսածնին ետ դարձնելով, լոկ
խորագրով մը écho:

Հանրագիտակի խմբագրութիւնը հաստա-
տակամ և անսայթաք հինգ տարիէ ի վեր
կը շարունակէ իր գործը առանց ականջ կա-
խելու չորս կողմէն եղած գրուածներուն և
թէ Ծաղիկի պէս յարափոփոխ թերթերու և
անոր blanc-bec conducteurներուն հետ գործ
ունենալով իրեն դասակից ընելէ կզգու-
շանայ:

Հանրագիտակ այն նոճին է զոր չափելը
գաճաճներու գործը չէ: Avete capito?

Մեր այս կարճ այլ հասկցողին համար
ազդու արձագանքին իբր պատասխան փո-
խանակ սրամիտ (:) լաքլաքներ թխելու
Ծաղիկի քիթապճինները լաւ կընեն եթէ
Հօլուէյի դեղահամներու և կամ պիճ պիլ
կեճէին ազդը դնեն, որովհետեւ մտադիր ենք
լուծելու պահել այն բոլոր վայրահաչու-
թիւններուն՝ զորս պիտի փութայ հասցնել մեր
հասցէին՝ այդ թերթին իշ պաշի Մոլորակը:

ԶԱՏԿԻ ԱՌԹԻԻ

Եկեղեցի դացողները ու դպիրները պէտք
է որ մէկ շրջով գնեն, Ա. ադ չարթուան
շարականները:

Իսկ թաղականները պէտք է վճարեն 20
դրուշ ճրագալոյցի գիրքերուն համար, ո-
րոնք պէտք է նոր ըլլան:

Դիմել միմիայն Մարգարեան գրատուն
Մերձան փողոց:

ԱԶՔԵՐՆԻԴ ԼՈՅՍ

ԳՈՐԾԻ ԳԱԼԻՔ ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հագուիլ, շփուիլ եւ աղամանդներով
զարդարուիլ, ինչպէս նաեւ սան կա-
րասիներ կոկել ամէն կերպով, առանց
հասկնիդ պարպելու

Ա. Յ. Լ.

Ա Պ Ա Ռ Ի Կ

Մայր ես, աղջկանդ օծիտը կը մտածես՝ դիմէ՛.
Օրիորդ ես, շիք և աժան հագուիլ կուզես՝ դիմէ.
Երիտասարդ ես և շիքը կը սիրես՝ դիմէ.
Տարեց ես և ցուրտէն պատսպարուիլ կուզես՝ դիմէ.
Տղաներ օւնիս որոնց պիտոյքը զանկը կը ճանցնեն՝ դիմէ.
Ամուսնացու աղջիկ ունիս՝ ըրգակներու պէտք ունիս՝ դիմէ.
Եկածը կազանդ, է նուէրներ գնել կը փախարիս՝ դիմէ...
Տարին բանի մը անգամ հովանոց գնելէ՛ր զգուած ես՝ դիմէ.
Ձեռքդ պարսպ ճամբայ քալել չես սիրեր՝ դիմէ.
Կուզես տունդ կոկել ճաշակաւոր կարասիներով՝ դիմէ.
Առաջնակարգ և տոկուն գուլպաներու պէտք ունիս՝ դիմէ.
Կուզես շիք, ճաշակաւոր և լաւ տեսակ փողկապներ ու-
նենալ՝ վերջապէս կուզես ոտից ցլուխ հագուիլ, շքուիլ,
պծուիլ

դիմէ միմիայն

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵՍ ՇՈՒԿԱՅ, Գուլուճըլար փողոց թիւ 13

ուր պիտի գտնես ամէն տեսակ հագուստի,
ճերմակեղէնի, ֆանթէզիի, ադամանդի,
ժամացոյցներու, շղթաներու և ամէն տեսակ
կարասիներու ճոխ մթերք մը:

ՎՃԱՐՄԱՆՑ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւ-
րին 20 կանխիկ և մնացեալ գումարին հա-
րիւրին 5ը շարաթական վճարմամբ.

2. Կանխիկ գնողներու համար հարիւրին
5 զեղչ:

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն մի-
միայն ադամանդեայ գոհարեղէնները երբ
գործածուած բայց անվնաս մնացած ըլլան,
հարիւրին 10 զեղչով, իսկ ապառիկ ծախ-
ուած և անվնաս մնացած միմիայն ադաման-
դեայ գոհարեղէններն ալ հարիւրին 15
զեղչով ետ կ'առնուին:

ՍԱՆԱՐԿՈՒԹԻՒՆ 24ԱԵ

22—30

«ՀԱՆՐԱԳԻՏՍՈՒԹՅԱՆ» ԹԵՐԹՈՒՆԸ 11

Հեղինակ՝ ԼՈՒԻ ՊՈՒՍԵՆԱՌ

Թարգմանեց՝ Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

10,000 ՏԱՐԻ

ՍԱՌՆԱԿՈՅՏԻ ՄԸ ՄԵՁ

Մ. Սէնթեզ աչքերը խոշոր խոշոր բացած կը դիտէր այն քաղաքը որու վրայ կը գտնուէին : Բիշ մը մտամիտփումէ ետք յաբեց :

— Եթէ չեմ սխալիր սա շէնքերը Չինական տուններ են, հազիւ քիչ մը տարբեր անոնցմէ, զորս մեր ատենները կը տեսնէինք երկնային կայսրութեան մէջ : Ձեռք և ոճր գրեթէ անաղարտ մնացած են :

— Ինչպէս որ անաղարտ մնացած են մեր լեզուէն և մեր դիմագիծերը, պատասխանեց Մեծ-ձերունի-պարոնը : Ինչ հարկ փոխել ինչ որ տեսքով հաճելի և գործողութեամբ յարմար են : Այս տունները յախճապակիէ են, շատ մաքուր, շատ զով, շատ առողջ անոնք մեզի չեն հաղորդեր մօտակայ ճախճախուտներուն թունաւոր բոյրը, չար սողուններու և միջատներու անմատչելի են, և մեզի գերծ կը պահեն արեւին մերթ սաստիկ ջերմութենէն : Այլ աւելի ինչ ուզել :

— Բայց ոչ թէ զանոնք շինելու, ալ նիւթերն իսկ ճարելու համար ճարտար վարպետներ պէտք են :

— Մեր գործաւորներն ալ ունինք : Ասոնք են Մաս-Չինները որոնք մեր տեսչութեան տակ կը կատարեն ամէն երեսակային աշխատութիւններ :

— Ձեր այնքան փափկացած, նրբացած և այս կոշտ աշխատութիւններուն անկարող ցեղը տեսնելով կը մոռնամ թէ ուրիշ ցեղ մըն ալ կայ, իմ ցեղս, անոնք որ բռնադատուած, անիծուած են . . .

— Անոնք ոչ բռնադատուած են, ոչ ալ անիծեալ, ինչպէս կը կարծէք Նախածին : Անոնք պարզապէս ստորին խառնուածքով մարդիկ են, կաշխատին առանց նախաձեռնութեան և քիչ մըն ալ կենդանի պէս : Անոնք ոչ մէկ նորութեան հետամուտ են, բայց ինչպէս ըսի մեր հրամանները կը գոր-

ծադրեն և պատուական գործաւորներ են արհեստի, ճարտարագործութեան և երկրագործութեան մէջ : Արդեօք այսպէս չէր նաև ձեր ժամանակները : Չկային խոնարհ, կամ եթէ կուզէք աղքատ մարդիկ որոնք պէտքին անողորմութեան առջև դատապարտուած էին ամենէնխիստեկոշտաշխատութեանց, մինչ ուրիշներ, երջանիկներ, կը նպաստուէրուն անոնց յաջողութիւններէն և քրքրախնայներէն : Դուք իսկ, Նախածին, որ մըշակուած մըտքի տէր մէկն էք, երբեք հող մշակած էիք, նիւթեղեններ կրած, հագուստներ հետածկամ պտուղներ քաղած էիք : Այս գործերը անպատճառ կատարել կուտայիք ձեր ստորակարգեալներուն, այսինքն ձեր Մաս-Չիններուն, որոնց չէիք նայեր իբր ձեր հաւասարները : Եւ եթէ ասոնք մարդու պէս էին նիւթական տեսակէտով, չէին կրնար իբր իմացականութեան տէր մարդ ըլլալ : Ձեր ժամանակները արտադրել տուողին և արտադրողին, շահագործողին և շահագործեալին միջև տարբերութիւնը այսօրուէն պակաս էր դուցէ, բայց գոյութիւն ունէր ամէն պարագայի մէջ :

— Մենք մեր աշխատութիւնները կը վարձատրէինք, թոշակ կուտայինք :

— Կը կարծէք որ մեր Մաս-Չինները ձրի կ'աշխատին : Մենք անոնց կուտանք ինչ բանի որ պէտք կրնան ունենալ, ուտելիք, հագնելիք, ծածկուելիք, խնամք երբ հիւանդանան, բնակարան մը և հանգիստ երբ ծերանան : Արդեօք ժամանակաւ դուք այսչափ բան կրնէիք ձեր իններուն համար :

— Այսպէս, ըսել է, առաջին անգամ իրենց շինածը իրենք կ'առնեն : Այն կերակուրները որ անոնց կուտաք . . . զգեստները զորս անոնք կը պատրաստեն, տունները զորս իրենք կը շինեն, վերջապէս միւս ամէն բաներն ալ : Եթէ դուք չըլլայիք,

անոնք իրենք իրենց համար պիտի պատ-
րաստէին արդէն այդ բաները որովհետեւ,
մէկ խօսքով, անոնք կրնան ապրիլ առանց
ձեզի:

— Կը մոռնաք թէ անոնք ծառայող ցե-
ղըն են և մենք տէրերն ենք: Ինչ որ հոս
կայ մերն է և անոնք ոչ մէկ բանի կրնան
տիրանալ: Մեր կամքը օրէնքի ուժ ունի,
որովհետեւ անոնք մեր ամենայեւին մարդե-
րէն անբաղդատելի կերպով ստորին են: Հաս-
կըցաք կարծեմ այնպէս չէ, յարեց Մեծ-ձե-
րունի-պարոնը, որուն հանդարտ ձայնը
վայրկեան մը աւելի զօրացաւ և դողաց:

— Աւա՛ղ, միմռաց ցուազնօրեն Մ. Սէն-
թեղ, ահա քսան հազար քաղաքակրթիչ
տարիներէ ետք, ինքզինքս կը կարծեմ ե-
րիտասարդութեանս ատեն տեսած գերիներու
տէրերը: Այսպէս կը խորհէին նաեւ Հարաւա-
յին Ամերիկացիք, մինչև որ եկաւ պատե-
րազմը և ջախջախեց միլիոնաւոր տարա-
բաղդ գերիներուն շղթաները: Ի՞նչ յեղա-
շարժութիւն . . . :

Վիճաքանութիւնը փակուած էր: Խում-
բը սկսաւ շարժիլ, շարունակել իր ճամբան
օդին մէջէն: Ծերունի գիտունը իր մտածու-
թեանց խորը թաղուած, կը նշմարէր որ իր
տակէն կանցնէին գետեր, անտառներ, դաշ-
տեր, բնակավայրեր, գետին ծռած և ճամ-
բաներուն վրայ աշխատող Մաօ-Չիններ, ո-
րոնց քովէն կանցնէին մեկուսացած խում-
բերով մեծագլուխ մարդիկ անհոգաբար սա-
հելով կամ փայլակներու պէս արագընթաց,
ինչպէս որ կուզէր իրենց քմահաճոյքը:

Մեծ-ձերունի-պարոնը որ յարգանք կը
դիտէր իր աւելի երիտասարդ և Ուղեղա-
յիններու վարչութեան խորհրդաւոր դա-
սակարգին մէջ անկից աւելի ստորադաս
ընկերները, առաջին անգամ ինք խզեց
լուծութիւնը: Բարեմիտ ձերունին քիչ մը շա-
տախօս կերեւէր և այս լուծութիւնը իրեն
ծանր կուգար: Ուստի ըսաւ Մ. Սէնթեղի:

— Կուզէ՞ք որ արագաշինք մեր ըն-
թացքը: Հոսկի՛յ՝ Թոմպուքթունը դիտելէն
աւելի հետաքրքրական բան չկայ: Մնաց
որ այս քաղաքին վրայ մէկ քանի վայրկեան
միայն պիտի մնանք դիտելու, և յետոյ մեր
ճամբորդութիւնը պիտի շարունակենք երկ-
րագունտիս շուրջը:

— Շատ աղէկ, Մեծ-ձերունի-պարոն:
Բայց խնդրեմ հիմակ որ Թոմպուքթուն, ձեր
բնակավայրը պիտի երթանք, նախ ըսէիք
թէ ի՞նչպէս է ձեր ընտանեկան կազմակեր-
պութիւնը, իրարու հետ և Մաօ-Չիններուն
հետ ձեր յարաբերութեան եղանակը: Անձ-
նապէս դուք մէկ կամ աւելի գերիներու
տէ՞ր էք թէ ձեր տիրապետութիւնը ամբողջ
ցեղին վրայ է: Ի՞նչ են ձեր սովորական
զրադումները:

— Պիտի պատասխանեմ, գոհացում պի-
տի տամ հետաքրքրութեանդ, այն ձեւով որ
ա՛յլ կարենաս առանց այլեւաւելի մտնել մեր
վարած կեանքին մէջ: Հիմակ ըսէ ինծի գո՛հ
ես այս արագութեանէ: Այո՛: Ուրեմն մտիկ
ըրէ, ընտանեկան կազմակերպութեան կ'ըս-
կըսիմ: Մեր նախնիք բազմակիւն էին, բայց
5—6000 տարիէ ի վեր միակնութիւնը մուտ
գործած է մեր բարքերուն մէջ, բայց ո՛ւ է
օրէնք չկայ թէ քաղաքացի մը քանի՛ կին
կրնայ աւնել: Ինչպէս որ կնոջ ընտրու-
թեան և քանակութեան վրայ ազատ է մարդ,
նոյն ազատութիւնը կայ նաեւ ընտանիքնե-
րուն կենալիք տեղերուն համար:

— Ի՞նչ, ամէն ամուսնի իրեն յատուկ տեղ
մը չունի՞ ուր կրթէ իր զաւակները և խմբէ
իր գերիները:

— Այո՛ւ և ոչ: Այսինքն տուները ամե-
նուն ալ սեփականութիւնն են: Ամէն մարդ
ուզած տեղը կընտրէ, ուզածին չափ կը
նստի հոն և օր մը երբ խելքին փչէ կամ
քմահաճոյքը կամենայ ուրիշ տեղ կերթայ:
Տուները մեծղի յախճապակիներէ շինուած,
գրեթէ անքանդելի են և սերունդներ ապ-
րած են անոնց մէջ: Եթէ անբաւական ըլլայ
իրենց թիւը և կամ աւրուին, Մաօ-Չինները
անմիջապէս կը լրացնեն զայն:

— Կը հասկնամ այս դրութիւնը որ կը
յիշեցնէ մը կահաւորուած պանդոկներու
դրութիւնը, զոր Ամերիկացիք այնքան գոր-
ծածեցին և զեղծանեցին: Բայց այս ամէն
փոփոխութեանց մէջ ի՞նչ կըլլան խեղճ Մաօ-
Չինները . . . :

— Անոնք կը մնան նոյն տեղերը և նոր
եկող տիրոջ կը ծառայեն: Այսպէս ամէն
տան մէջ կան Մաօ-Չիններ, ուր որ երթանք
կը գտնենք իբր մեր ծառաները, մեր գերիները:
(Շարունակելի)

ԱՐՏՈՑԱՔԷ ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն Մ. ՍԱՐԵԱՆ

Պապ. Ալի ճասէսի Թ. 38

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԶԱՆՊԵՐՁԵԼ ԻՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԵՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբան Հանամ, Թօփաշեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տուկունութեամբ և գիներու անմրցելի աւժանութեամբը շահած է բոլոր իրեն դիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց քէյրոյիներու և տղայոց չիք և դիմացկուն փոքրիկներու հոն միտերք մը պատրաստ ունի, որ շերմապէս կը յանձնարարուի ամէն աւնոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից.

Սակարկութիւն չկայ, թիւ 2 զրշ է. Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին.

30—50



Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տուկունութեամբ և գիներու անմրցելի աւժանութեամբը շահած է բոլոր իրեն դիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց քէյրոյիներու և տղայոց չիք և դիմացկուն փոքրիկներու հոն միտերք մը պատրաստ ունի, որ շերմապէս կը յանձնարարուի ամէն աւնոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից.

Սակարկութիւն չկայ, թիւ 2 զրշ է. Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին.

30—50

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒՂԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՑԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒՂԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԷՏ ԹԵՑԵՐ

Կ. Պոլիս, Պահակ-Գափու, Ճերալ-Պէյ Խան, թիւ 10



ԱՆՏԵԼԻՊ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒՄԱՐԱՆԱՅ ԵՒ ՊԵՏԱԿ

ՄԱՍՆԱԻՐԱՐԱՐ

Ֆոնոկրաֆի Է. Դյաններու. Կրամֆոննի
Է. Էրկկոլմ Բլագներու, Կեդրոնա-
տեղի Պահակ Գաբու, Հաճի Պէքի
Էմինտի կից, Եալտըզ Խանի տակ
թիւ 2: Մասնագիտ Պահակ Գաբու.
թիւ 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չահած համբա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
դրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ կրամֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք միջիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանաց հետ, թէ՛ տոկունութեամբ, ճայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
կեդրոնատեղին: